Հայաստան

Ապրիլ-հունիս, 2021 թվական

ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է **Լեռնային Ղարաբաղից** տեղահանված անձանց կարիքների հասցեագրման իր աշխատանքները՝ համակարգելով ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի ու Հայաստանի կառավարության հետ:

ՄԱԿ ՓԳՀ-ն տեղահանված եւ հյուրընկալող համայնքների համար **խաղաղ համակեցության** ծրագրեր է մեկնարկել Հայաստանում, որոնք հիմնված են համայնքահեն պաշտպանության եւ տարիքի, գենդերի ու բազմազմանության մոտեցումների վրա:

Հայաստանում մեկնարկել են COVID-19-ի դեմ անվճար պատվաստումները: ՄԱԿ ՓԳՀ-ն վերահսկում է գործընթացը՝ մտահոգության ներքո գտնվող անձանց համար պատվաստանյութի հասանելիություն ապահովելու համար:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

24,340 մարդ

տեղահանված եւ հյուրընկալող համայնքներից տեղեկացվել է COVID-19-ի եւ ընդհանուր պաշտպանության հարցերի մասին՝ շնորհիվ իրազեկման միջոցառումների:

Ավելի քան 70 մարդ,

ներառյալ փախստականներ, ապաստան հայցողներ եւ փախստականի իրավիճակում գտնվող անձինք, մասնակցել են ամենամյա **մասնակցային գնահատման գործընթացին:**

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

է ստորագրվել **Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Հայկական Կարմիր խաչի ընկերության եւ ՄԱԿ ՓԳՀ**-ի միջեւ՝ դրամական օգնության վերաբերյալ:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2021 Թ. ՀՈՒԼԻՍ 2-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական պահանջներ

15.4 միլիոն ԱՄՆ դոլար



Երիտասարդական կոալիցիայի խմբակային լուսանկար Երեւան, Հայաստան, հունիս, 2021 թ.
© ՄԱԿ ՓԳՀ

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ* 2021 Թ. ՀՈՒՆԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



** Աղբյուր՝ Միգրացիոն ծառայություն*
*** ներառյալ՝ 36,989 փախստականի նման իրավիճակում գտնվող անձինք՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեւանքով եւ Հայաստանում բնակվող 4,527 փախստականի նման իրավիճակում գտնվող սիրիահայ, որոնց իր օժանդակությունն է տրամադրում ՄԱԿ ՓԳՀ-ն:*

Ձեռքբերումների թարմացված տվյալներ

Գործառնական համատեքստ

2020 թ. սեպտեմբերի 27-ին շփման գծի երկայնքով ծայր առած բախումները տարածվեցին **Լեռնային Ղարաբաղում** եւ այլ հարակից տարածքներ, մինչեւ նոյեմբերի 9-ին հրադադարի հայտարարություն ստորագրվեց: Հակամարտությանը զոհ դարձան խաղաղ բնակիչներ, ավերվեցին ենթակառուցվածքներ, եւ Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի հարակից շրջաններից շուրջ **90,000 մարդ** տեղահանվեց: Հայաստանի կառավարության տվյալներով՝ 2021 թ. մայիս 25-ի դրությամբ Հայաստանում **36,989 մարդ** գտնվում է փախստականի նման իրավիճակում:

Փաստաթղթերը, բնակարանային ապահովումը, պատշաճ զբաղվածությունը եւ կենսապահովման հնարավորությունները շարունակում են մնալ ապաստան հայցողների եւ փախստականների առավել հրատապ կարիքների շարքում: Հակամարտության սրացմանը զուգահեռ ընթացող COVID-19 համավարակն է՛լ ավելի խորացրեց Հայաստանի դժվարին սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված մարտահրավերները:

ՄԱԿ ՓԳՀ-ն ու իր գործընկերներն աշխատում են պաշտպանության միջավայրի կատարելագործման ուղղությամբ, միեւնույն ժամանակ աջակցելով առավել ռիսկային խմբերին: ՄԱԿ ՓԳՀ-ն հանդես է գալիս ի շահ մտահոգության ներքո գտնվող անձանց ներառմանը ազգային արձագանքման ծրագրում, ներառյալ՝ COVID-19 վերականգնման եւ պատվաստման, ինչպես նաեւ այլ օրենսդրական ու վարչական բարեփոխումներում:

Պաշտպանության մշտադիտարկում Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց մոտ. Սյունիքի մարզ, ք. Գորիս, 2021 թ. մարտ: © ՄԱԿ ՓԳՀ/ Արեգ Բալայան

2021 թ. ապրիլ-հունիս ամիսների ձեռքբերումները

Մտահոգության ներքո գտնվող 736 անձ դրամական օգնություն է ստացել՝ COVID-19 համավարակի հետ կապված իրենց հիմնական կարիքները հոգալու համար: **Մտահոգության ներքո գտնվող 71 անձ** բազմանպատակ կանխիկ դրամաշնորհ է ստացել:

Մտահոգության ներքո գտնվող **2,610 անձ** օգտվել է ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված սոցիալական ծառայություններից:

Մտահոգության ներքո գտնվող **871 անձ** օգտվել է ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված առողջապահական ծառայություններից:

Մտահոգության ներքո գտնվող **174 անձ** ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից տրամադրված իրավաբանական խորհրդատվություն եւ աջակցություն է ստացել:

Մտահոգության ներքո գտնվող **1,285 մարդ** առաջնային կարիքների բավարարման համար բնաիրային օգնություն է ստացել. 699 կտոր ոչ պարենային ապրանքներ, այդ թվում՝ գազի վառարաններ, խոհանոցային պարագաներ, տարաներ եւ այլ իրեր:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Մտահոգության ներքո գտնվող **113 երեխայի** ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր Հայկական կարմիր խաչի ընկերության եւ Վորլդ Վիժն Հայաստանի կողմից դեպքերի վարման մասնագիտական աջակցություն է տրամադրվել:
- **Տարեց եւ հատուկ կարիքներ ունեցող 14 անձի** ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր Վորլդ Վիժն Հայաստանի կողմից դեպքերի վարման մասնագիտական աջակցություն է տրամադրվել:
- Պաշտպանության մշտադիտարկման շրջանակում անցկացված հարցազրույցների միջոցով տեղեկացվել է **8,216 մարդ**, իսկ շուրջ **1,150-ն** առանձնացվել են՝ հավելյալ աջակցության եւ ծառայությունների հասանելիության նպատակով ուղղորդման համար:
- ՄԱԿ ՓԳՀ-ն տեխնիկական աջակցություն է ցուցաբերել **երկու քաղաքապետարանների** եւ **հինգ համայնքային կազմակերպությունների՝** խաղաղ համակեցության նախագծերի եւ աջակցության համայնքահեն նախաձեռնությունների իրականացման համար՝ կիրառելով համայնքահեն պաշտպանության (ՀՀՊ), տարիքի, սեռի եւ բազմազանության (ՏՍԲ) եւ համայնքների հետ հաղորդակցության (ՀՀՀ) մոտեցումներ:

ԿԱՑԱՐԱՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

- **243 տնային տնտեսությունների** կարիքների գնահատումը, որն ընդգրկում էր մտահոգության ներքո գտնվող 900 մարդու, բացահայտեց ամենահրատապ կարիքները, որոնք ներառում էին ֆինանսական օգնություն, սնունդ, կենցաղային եւ հիգիենայի պարագաներ:
- Վերանորոգման նպատակով ընտրվեց **10 ժամանակավոր կացարան,** որտեղ ապաստանել էին Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք: Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ճապոնիայի, Եվրոպական միության մարդասիրական օգնության գրասենյակի (ECHO) եւ ՄԱԿ-ի Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամի (CERF/ԱԻԱՀ) կողմից ֆինանսավորվող վերանորոգման աշխատանքները նախատեսված են ավարտին հասցվել հաջորդ եռամսյակում:

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին համագործակցում է պետական եւ ոչ պետական շահակից մարմինների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն անդամակցում է մի շարք միջգերատեսչական համակարգման հարթակների ու մեխանիզմների: ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին այն խթանում է Հայաստանում Կայուն զարգացման Օրակարգ 2030-ի կենսագործման աշխատանքները:
- ՄԱԿ-ի հայաստանյան թիմը ՄԱԿ-ի մշտական համակարգողի եւ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի համատեղ ղեկավարության ներքո գտնվող համակարգման ճկուն կառույց է ստեղծել: Համակարգող կառույցը խարսխված է մարդասիրական չորս Աշխատանքային խմբերի (ԱԽ), ինչպես նաեւ Վաղ վերականգնման թեմատիկ հինգերորդ ԱԽ-ի վրա, որոնք նպատակ ունեն ամրապնդել ինչպես փախստականի նման իրավիճակում գտնվող բնակչության, այնպես էլ հյուրընկալող համայնքների դիմակայունության կարողությունները: ՄԱԿ ՓԳՀ-ն ղեկավարում է Պաշտպանության ԱԽ-ն եւ Կացարանի ու Ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) ԱԽ-ն, ինչպես նաեւ Դրամական օգնության ենթաաշխատախմբի համաղեկավար է:

Ֆինանսական տեղեկություններ

2021 թվականին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը փորձում է **15.4 միլիոն** ԱՄՆ դոլար հայթայթել՝ փախստականի նման իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման եւ իր տարեկան ծրագրի ծախսերը հոգալու նպատակով: **Միջգործակալական արձագանքման ծրագրի** ֆինանսական պահանջը **62.1 միլիոն ԱՄՆ դոլար է**:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է այն նվիրատու կառույցներին, որոնք իրենց ներդրումն ունեցան 2021 թվականի իր ծրագրերի ֆինանսավորման գործում.

Հայաստան | Եվրոպական միություն (ECHO) | Ճապոնիա | Ռուսաստանի Դաշնություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ՄԱԿ CERF | GAP Inc. | UPS Corporate

ՄԱԿ ՓԳՀ-ն շնորհակալություն է հայտնում դոնոր կառույցներին՝ 2021 գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացված 10 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ներդրումների համար.

Նորվեգիա | Շվեդիա | Իսպանիա, մասնավոր դոնորներ | Նիդեռլանդներ | Դանիա | Գերմանիա | Ֆրանսիա | Կորեայի Հանրապետություն, մասնավոր դոնորներ |Շվեյցարիա | Ճապոնիա, մասնավոր դոնորներ | Իռլանդիա | Բելգիա:

Առանց նախապայմանների հատկացված միջոցները որեւէ սահմանափակմամբ չկաշկանդված այն գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր եւ վտանգված բնակչությանը:

Մանրամասն տեղեկությունների համար այցելել UNHCR Operational Data Portal

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ, Ռասել Ֆրեյզեր, արտաքին կապերի համակարգող, **fraser@unhcr.org**

ՄԱԿ ՓԳՀ Եվրոպայի տարածաշրջանային բյուրո, Դելֆին Կրեսպեն, դոնորների հետ կապերի համակարգող, **crespin@unhcr.org**